



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

A 13

Lün
2235

~~23 N~~

3/

1999

1881

Երեսուն կող.

ՅՕԳՈՒՏ ՎԱՆԱՅ ՍՈՎԵԼՈՅ

ԳՐՈՁՕ

ԿՐԱԿՆՈՒԹՅԱՆ  
ԿՐԻՍՏՈՍԻԱՆ  
ԿՐԻՍՏՈՍԻԱՆ

1627

Ա. ՔԻՇՄԻՇԵԱՆՑ



ՓԻՆԼԻՍ  
Ի Տպարանի Յ. Մարտիրոսեանց.

1880

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԻՍՏՈՍԻԱՆ  
Մ. Կ. ՍՊՈՒՆՆԻՅԱՆ  
ԿՐԻՍՏՈՍԻԱՆ

[Հանրապետության]

ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԳՐԱԳՐԱՐ

05074

Дозволено цензурою. Тифлисъ, 20 Февраля 1880 г.



ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԳՐԱԳՐԱՐ

Типография И. Мартиросянца, на Орб. ул. д. № 5.

0881

2/8 2239

42235-60

Ք Ր Օ Շ Օ\*)

— Հայ լաւ գործիչ, հայ լաւ գործիչ, բացառանշում էր մի 10-12 տարեկան երեխայ, գլխից մինչև ոտը սևացած, մրոտած, երեկոյեան մուխն ընկած ժամանակը անցկենարով Քարափի թաղովը: Սա զնում էր բռնած ունենարով բեռնաւորած ջորուսանձը, որին հետևում էին նոյնպէս մէկս մէկու ետևից կապած մի շարք ջորիներ և էշեր, որը բեռնաւորած, որը առանց բեռնի:

Երեխան զնում էր գլուխը քարշ գցած խոր մտածմունքների մէջ: Ջորիների շլինքի տակ կապած զանգակների զօղանջումն տարածվում էր շատ հեռու: Այն գործիչ ծախողը երբեմն որպէս թէ սթափած քնից, ուշքի էր գալիս և աչքերը վեր բարձրացնելով աների կողմը, նորից սկսում էր իրա սովորական եղանակով, նոյն իսկ բառերով, յիշել իրա գործը գովասանքը կամ հայերէն կամ թէ չէ ուսերէն և վրացերէն:

\*) Արտատպած է «Մեղ. Հայ.» 1872. № 6-էջ:

— Հայ մէ լաւ բեռն է մնացի, հայ մէ լաւ բեռը, գոչեց նա կրկին կանգնելով մի մեծ տան առաջ: Բաղնուում մի անձն երեւեցաւ և նորան ձայն տուեց.

— «Տօ՛, գրօշօ, բեռը վրէնց ես տալի, հարցուց նա այն տեղից:

— «Օխտն արասի, աղջիկ պարուն, պատասխանեց գրօշօն, կանգնելով:

Չայնը պատահանում էր կնիկարմատի, «օխտն արասի» բառից կինը երեսը շուռ տուեց մի բոպէում և ծիկա տալով յետ թռաւ բաղնից:

— «Ա՛, . . . դարմացած ասաց գրօշօն, վեր նայելով: Ի՞նչ էլաւ նրանց: Մի քանի ժամանակ այնտեղ կանգնած մնաց գրօշօն և յետոյ թքելով շարունակեց իրա ճանապարհը՝ պինդ քարշելով իրա ետեւից երթող անասունի սանձը: Նա ինչոր մամուում էր քթի տակը: «Մէ չէլաւ, չէ՛, մտածում էր երեխան, վուր պրծիլ էի էս թրիկգալեմէն, ինչ ասեմ գործը աիրուչը, վուր ջէր շատ փայն չեմ ծախիս . . . Այս մտածմունքի մէջ էր, որ մի ցած դռներից դուրս վազեցաւ մի տղայ և կանչեց նորան.

— Գրօ՛շօ, գրօ՛շօ, արի՛, մամէս գուզէ առնի: Գրօշօն, որ բաւական հեռացել էր այն տանից, մեծ դժուարութեամբ այն նեղ փողոցում կարողացաւ յետ դարձնել իրա ջորիներին ու էլերին: Նոցա յետ

դարձնելիս այն լուռ ու մունջ փողոցի մէջ մէկ կողմից զանգակների զօղանջմանից, միւս կողմից գրօշօյի անասնոց վերայ բարկանալուց, սաստիկ ազմուկ բարձրացաւ: Ինչու թափեցան ամէն տեղերից հարեանները և նոքա իրանց կողմից խեղճ գրօշօյի գլխի վերայ անէճք ու յիշոցներ էին թափում:

— «Էս վախտօքը ո՞վ է իմացի գործը ծախիլը, դոշում էր մի պառաւ կին:

— «Ստանէն է խաբար, ասում էր մի կին ձեռին ծծի երեխային խտտած ունենալով: Ափսուս իմ մարդը տանը չէ, վուր մէ լաւ դնքօել էր, չարանում էր սա:

— Մորի՛, կորի՛ էսզանց, բղավում էր մի վաճառական խալաթով և արախչինը գլխին ու չերուխը ձեռին:

— Տանս հիւանդ ունիմ պարկած, չեմ գիդի ի՞նչ է գալու գլխին, ծիկայ էր տալիս նրա կողակիցը, երեկոյեան շորերով գլուխը յետ կապած:

Գրօշօն, որ այս ժամանակ շուռ էր բերել մեծ շարչարանքով իրա անասուններին, շշկլուած կանգնած նայում էր նոցա վերայ, չհասկանալով թէ ինչի՞ն նորա վերայ շարանում: Մուշտարին, որ նրան կանչել էր, տեսնելով որ նորա պատճառով սկսուեցաւ փողոցի մէջ աղմուկի բարձրանալը, դուրս յետ դրեց և վազեց ներս:

— Մտի՛կ, մտի՛կ, վո՛ւնց է կեանքը շուռ տալիս, ասում էր նախատինքով բարկօնից վաճառականի կինը, քօքօլայ ղըգեղով նրան. հըմ . . հողիմ քու մէյմնիս գլուխը:

— Վ ա՛, ես ի՞նչ անիմ, ասաց գրօշօն և արտասունքը երեցաւ աչքերումը: Հօրէսա էստի կանչեցին ինձ, շարունակեց նա, ցոյց տալով ցած տան վերայ: Բայց էլ ուշ էր արդարանալու, որովհետեւ էլ փողոցում ոչ ոք չէր մնացել: Նրեխան գառն արտասունքով լաց եղաւ և դնաց նոյն իսկ ճանապարհով, որով եկել հասել էր այս չարաբաղդ տեղը: Այս անգամ նա էլ չէր գովասանում իրա ապրանքը, այլ շտապով գնում էր որ շուտով հասնի իշի մէյդան և պահ տայ անասուններին և ազրանքը իրանց տիրոջը:

Իշի մէյդանում գործը վերջացել էր: Ամբողջ մէյդանը համարեա՛ դատարկ էր . միայն տեղ տեղ էլի ճրագի օգնութեամբ առուտուրը շարունակվում էր: Գրօշօն պահ տուեց տիրոջը ջորիններին և էշերին բեռներով:

— Հօրեա քանիսի իմ ծախի, ասում էր գրօշօն, հանելով գրպանից փողեր:

— Բանիսի . . . տօ՛, էս ի՞նչ ես արի. ես քիզ երեք ջորու բեռը գործիլ եմ պահ տուել, էրկուս էլ իշի. էստի, էս ի՞նչ ես տալի:

— Իշրկու ջորունը ծախեցի ու մէկն էլ էշի, ա-

սում էր գրօշօն դեռ ևս չհանդարտուած այն պատահանքից:

— Երա՛, մէ իշինը վո՛ւրդի է, ակար ես քիզ էրկու իշի բեռն իմ պահ տուի, էրկուսն էլ ծախել ես ու փուղը կի մէ իշին իս բէրի: Նայեց գրօշօն ու հառաչեց: Մէկ իշի վերայ բեռը չկար: Այն ղալմաղալի և դավիդառաբայի ժամանակ, երբ գրօշօն շրջկըլուած կանգնած էր այն նեղ փողոցում, իշի բեռը մի անզգամ կտրել էր և ներս տարել իրա տուն:

— Ե իս . . . արաւ գրօշօն, բայց էլ ուշ էր. նա ընկել էր արդէն տիրոջ ձեռքը. նորան արդէն լաւ դնքսում էին: Նորա լացի ձայնը երկինքն էր հասնում:

— Ա յ յ դէդիջան, վայ . . . աղաղակում էր գրօշօն:

— Ե իսէ՛նց պիտի քեզ, էսէ՛նց, բղավում էր տէրը ձեծեղով. գո՛ւղ:

Լացի վերայ հաւաքուեցաւ անթիւ բազմութիւն: Նրեի այդ տեսակ տեսարանները սովորական էին էշի մէյդանում, որ ոչ մէկը նոցանից մէկ ձայն ծպտուն չհանեց գրօշօյին ազատելու համար այն վայրենի բռնակալի ձեռքից:

— Ե ղալթօբին ձեծում ին, Մղալթօբին, բղավելով ամէն տեղից գալիս էին գրօշօներ տեսնելու, թէ ի՞նչպէս իրանց նման գրօշօյին ձեծում են:

Ա կրջապէս ամէն բանին վերջ կայ: Տէրը բա-  
 ւական թափեց զբոշոյի վերայ իրա մաղձը և թո-  
 ղեց արիւնաթաթաւ: Թղայօրին ընկած գետնի վե-  
 րայ: Ուշ երեկոյեան գեռ և օ թնդացնում էր զբոշոն  
 օդը իր սիրտ պտտառոտող աղաղակով և միայն առա-  
 ւօտեան արշալուօին բնութիւնը յաղթեց նորան: Նա  
 խփեց իրա արտասուներով լի աչքերը և խոր ու հան-  
 դարտ քնեց նոյն խակ տեղումը, որտեղ նրան ծե-  
 ծել էին:

Միւս օր ուշ կէսօրին զարթեց նա քնից և  
 նորա առաջի շարժումն էր բանալ աչքերը: Բայց  
 երեսան քանի որ զօն էր տալիս իրա արտեանունք-  
 ներին, նոքա չէին բարձրանում:

— Ա այ մէ, քոռացիլ եմ, գոչեց նա, ձեռքերը  
 տանելով դէպ ի իրա աչքերը: Բայց ձեռքերով էլ  
 ոչինչ չկարողացաւ անել: Գլխից հեղած արիւնը  
 թանձրացել էր արտեանունքների մօտ և խառնուելով  
 արտասուքի հետ՝ միմեանց էր կոյցրել նորա ամէն մի  
 մաղը: Տարակուսած այս հանդամանքից երեսան  
 ճմեռել էր իրա աչքերը այնքան, որ կարմրացրել էր,  
 գոչելով իրան օդնութիւն:

— Ի՞նչ է, վուրթի, ինչ ես հարայ տալիս,  
 հարցուց մի ծերունի մօտենալով նորան:

— Ա այ մէ, քոռացիլ եմ, օտկեցէք:

— Չէ, վուրթի, մի վախենա, չես քոռացի:

էս նրմուտին կու լաւացնիմ քեզ. և այս ասելով նա  
 վազեց մօտիկ միկիտանի դուքան և բերեց խեղդով  
 ջուր: Նա թաց արաւ նորա աչքերը. երեսան բաց  
 արաւ աչքերը և առաջին տեսարանը, որ ներկայա-  
 ցաւ նորան, չորս կողմ թանձրացած արիւնի դուբն  
 էր:

— «Ա այ . . . էս ի՞նչ է էլ և . . . նայում էր  
 նա զարմացած: Բայց երբ ուզեց վեր կենալ տեղեց,  
 այն ժամանակ միայն մտաբերեց երեկվայ իրա հետ  
 պատահած դիպուածքը և խոր հոգուց հանեց: Նա  
 էլ չէր կարողանում շարժուիլ տեղեց: Բոլոր մարմնի  
 վերայ երեկոյեան ծեծից ահագին նշաններ էր մնա-  
 ցել, որ ցոյց էին տալիս նորան թէ երէկ ինչ դրու-  
 թեան մէջ էր եղել: Մտաբերեց և այն հանգամանքը,  
 որի պատճառաւ նա ծեծ կերաւ: Բայց նորա լա-  
 միան էր, որ մէկ իշե բեռը չէր ծախել. շքաս վուր  
 ջհանդամը կորաւ ընդ, ասաց նա բարձրաձայն:

— Ումն իս, ում վուրթի ես, հարցուց ծե-  
 րունին, որ այս ժամանակ վերադարձաւ նոյն տեղը  
 խէրազէն ախրջ պահ տալուց յետոյ:

— Կս էլ չիմ գիղի, մամի, ասաց զբոշոն  
 խոր ախ քաշելով: Այժմ միայն նա նայեց իրան կու-  
 բութենից ազատողի երեսի վերայ և մեծ շնորհա-  
 կալութեամբ ժպտաց:

— Բա՛ս ո՞վ ծեծից քեզ, նորից հարցրեց ծե-  
րունին:

— Գործըստան Խ. . . .

— Ինչե՞ . . .

— Ինքս էլ չեմ գիտի, ասաց երեխան և ու-  
զեց վերկենալ տեղից: Ոտերը ցաւից թեքվեցան և  
նա դարձեալ վեր ընկաւ գետնի վերայ: Ո՛հ, էս ինչ  
է պատահի ինձ, բացազանչեց նա վշտալի ձայնով:

— Ա՛՛ր՛նչիչ, վուրթի, նորից մտիթարեց  
ծերունին. մէկ օրումը անցկուկենայ:

— Ո՞վ գիտէ, ասաց գրօջոն յուսահատուած:

— Մի՛ վախենա: Վո՛ւրդի իս կենում, ասա՛ ինձ,  
ես կուտանեմ քեզ տուն:

— Իս տուն ու տեղ չունիմ, մամի, գոչեց  
երեխան:

— Բա՛ս . . . .

— Իմ տունը խան էտի է, խան մօտիկ միկի-  
տանխանէն, խան էլ վուրդի վուր կու պատահի:

— Բաս, արի՛ ինձ մօտ գնանք, ես քեզ տանը  
կուլաւացնեմ:

Այս ասելով նա տուեց իրա փայտը երեխին և եր-  
երկուսը, մէկը ծերութենից միւսը ջարդուածութենից  
կաղալով զիմեցին զէպի մի հնութենից քանդուած  
տուն:

Մի քանի օր էլ իշի մէյրանում չէր երևում  
գրօջոն: Նորա հասակակիցները, նոյնպէս գրօջոներ,  
զարմանում էին նորա բացակայութեան համար:

— Տօ, Սիմոն, Ծղալօբը քուօը չըլի նընգի,  
զարմացած յայտնում էր իրա կակածանքը միւսին:

— Ե՛հ . . . էդքան էլ գիտ չե ըլի, հաւա-  
տացնում էր Սիմոնը:

— Բա՛ս, վուրդի է նա, հետաքրքրում էր ա-  
ռաջինը:

— «Ո՞վ, ո՞վ, հարցուց մի սևաչեայ աշխոյժ  
երեխայ առաջ գալով, Ծղալօբը . . . . հը՛մ, ա-  
րաւ նա և ժպտաց:

— Հա՛ ի՞նչ խաբար է, ի՞նչ խաբար է, յար-  
ձակուեցան նորա վերայ ամէն կողմից:

— Մեր Ծղալօբը, գիտի՛ք ի՞նչ, տղերք, սկը-  
սաւ աշխոյժ երեխան, էրէկ մէ ծեր մարդու հետ  
քուչա՛ քուչա էր մանգալի ու օղորմութիւն էր ու-  
ղում:

— Ա՛՛ա՛, վա՛, բացազանչեցին ամէն տեղից,  
վո՛ւնց կուլի:

— Ա՛նուն հօր վկայ, հաստատում էր երգուե-  
լով համբաւաբերը:

— Սըտին ի՞նչ . . . ասաց մէկը: —

— Սըտին Աստուծու կրակ, բացազանչեց աշ-  
խոյժ երեխան, առաջ գնալով մուշտին բարձրացած,

արա՛ մի հաւատա՛ք էլն . . . համարձակութեամբ  
ասում էր նա . . .

— Ա՛յ, է՛, է՛, է՛ . . . կուրի ես էկի՛, գու-  
չեցին ամէն գրօշօներ մի մի քայլ յետ գնելով :

Այս ժամանակ մինը բղավեց «գրօշօ» և ամէնքը  
վաղ տուին այն կողմը :

Ծղալօրը ճշմարիտ մուրացկանութեան էր տուել  
իրա գլուխը : վաղ երկրորդ օրը, երբ փոքր ինչ ոյժ  
էր զգացել իրա մէջ և իր մարմնի ցաւերից աղա-  
տուել, յայտնել էր նա իրա հոգատար ծերունուն, որ  
ուզում է էլն գնալ իրա գործին :

— Է՛հ, վուրթի, ինչ կօնիս . . . գրօշօու-  
թիւնը ինչ գործ է, վուր ուզումիս էլն նրան կպչե-  
թո՛ղ, արի գնանք ես ու դուն ողորմութիւն ուզենք,  
էս թափուր լաւ բան քու օրումը չես դտնի :

Ծղալօրը զարմացած մնաց ծերունու խօսքերից :

— Մ՛ամի, աղքատութիւն անի՛մ, ջեր խօսմ  
պառաւ չիմ, ան քոռ ու կուտ, որ էտ բանին կպչիմ :

Է՛հ, վուրթի, ինձ մտիկ ես տալի, ես վունց  
քոռ իմ, վունց կուտ, ամա՛ 10 տարեմէս կցած ես  
համաշա աղքատութիւն եմ արի, սրամէն լաւ փեշակ  
կուլի՞: Աուտան մէկ գրօշ լա՛ւ, չեն տայ մէ ուշուցը  
կուզնիմ նրանց յիդ : Նօրէսա, վուրթի, էսէնց անէ  
տուն մանգալով ինձ համա փուղ եմ մօզարի ու այ  
էս տունն էլ իմ տոխ : Ամա՛ դուն ի՞նչ ունիս :

Ես ի՞նչ կօնիմ փուղ, ասում էր գրօշօն :

— Իմ տարսը վուր կու գաւնաս, էնչախը  
փուղը քեզ պէտք գուրայ, համոզում էր ծերունին  
Ծղալօրին : և ճշմարիտ որ նա իրա խօսակցութիւ-  
նով գրաւեց երեխայի ուշք ու միտքը և զնաց ըն-  
կաւ նրա հետ նոյն ճանապարհին, որով նա գնացել  
էր բոլոր իւր կեանքի ընթացքում : Նոքա սկսան ո-  
ղորմութիւն խնդրել և առանց աշխատանքի ճարել  
իրանց ապրուստը :

Բայց այս տեսակ գործը Ծղալօրին երկար չու-  
զրաւեց :

Գրօշօն որ մի ժամում ամբողջ քաղաքը պր-  
տոյտ կգար, ամէն տեղ կհասնէր, ամէն բան կտես-  
նէր. այս անգամ հարկադրուած էր լինում ծեր մար-  
դու հետ քուչա քուչա մանգալով կամ եկեղեցիների  
դրան առաջ սաղ օրով կանգնած ողորմութիւն խնդ-  
րելու : Չէ, գա գրօշօյի սովորական բանը չէ : Գրօշօն  
աղաւ երեխայ է : Նա ոչ ոքի աղքեցութեան տակ  
չէ. նա ինքնուրոյն էակ է. կլինի դարձ, նա գործով  
էլ կարող է պարապիլ առանց ծուրութեան . էսօր  
էչերի ու ջորիների սանձը բռնած գործիչ է ծախում,  
վաղը թաբախը գլխին կինտութիւն է անում, միք  
է ծախում, քէֆը չուղեց գործելու, նա թողնում  
է բոլորը, փնտմ է սաղ օրով կամ Բրի ավեր չան-  
գալը ձեռին ձուկ բռնելու, կամ Թիֆլիսի փողոցները

չափելու: Ահա մեծաշուք հանդէսով տանում են ննջեցեալուն թաղելու, գրոջն այն տեղ է ու առաջ ու յետ է վազում դագաղի մօտ ննջեցեալ երեսը տեսնելու. կամ մի որ և իցէ քահանայի գտակը ու դաւազանը ձեռին առջևից է գնում մահտեսիների հետ միասին հպարտ ու փքած միւս գրոջների նախանձը շարժելով: Զօրք է անց կենում մուզիկայով, գրոջն առջևից է վազում և մուզիկայի հետ խաղացնում է իրա ձեռքերը, որպէս թէ կառավարելով նոցա ածելը և ինքն էլ բերանով նմանեցնում է նոցա ածելուն: Փողոցում որտեղ ինչ պատահի, գրոջն այն տեղ անպատճառ լուս կ'ընկնի և ցոյց կը տայ իրա համակրութիւնը զարմաղալ սարքողներին: Ամէնից շատ նա է բղավում և իրա համակրութեամբ դէպի մէկը և նախատինքով դէպի միւսը այն երկու անձանց մէջ վէճ է պատճառում, որ վերջանում է կռիով: Խօսեցան, վիճեցին, կռուեցան մէկս մէկու հետ, գրոջն հանդարտուեցաւ և հեռացաւ այն տեղից, որ միւս տեղում մի նոր բանի ականատես դառնայ: Այսպէս գրոջն, այն շարժուն էակը, իրա մանկական հասակից սովորում է փողոցներում ազատ շրջելու և ինչպէս քէֆը կտար, այնպէս սպրելու: Կարող էր արդեօք այժմ Ծղալօբը տանել այն ասպարիզին, որ պատրաստում էր նորա համար հոգատար ծերունին: Գրոջն մշտնջենաւոր չէ և նորա համար

կրութիւնը կամ սէրը չեն կարող լինել մշտական: Ամէն տարի գրոջի դինը ընկնում է. տասն ու վեց կամ տասն ու եօթ տարեկան հասակում գրոջն արդէն կորցնում է իրա նշանակութիւնը: Այս ժամանակից նա դադարում է լինել գրոջ և հարկադրած է գտնել իրա համար ուրիշ գործ: Նա առ հասարակ բարի և ազնիւ տղայ է, և ինչպէս ասում են Թիֆլիսում. շատ ջրթին է. այսօր պատահեցաւ նրա ձեռքում փող, նա հրաւիրում է իրա ընկերակիցներին և նրանց հետ քէֆ է անում, վաղը աղքատ կամ հիւանդ մարդու պատահեց թէ չէ, նա նրանց համար ոչինչ չէ խնայում, վրայից հանում է իրա վերջին շապիկը և տալիս է նրանց: Ուրեմն կարող էր նա մնալ այն տպաւորութեան մէջ, թէ երբեմն նրան համակրութիւն ցոյց տուին, հոգս քաշեցին նորա մասին: Չէ, Ծղալօբը այդ զգացմունքի համար չէր փոխի իրա ազատութիւնը ոչ մի ժամանակ. նա թողեց ծերունուն դարձեալ գնաց շրջելու փողոցներում:

Ղաչեց յետոյ, մօտ էր իրիկնապահին: Կօլով թաղե մի կտուրի վերայ հաւաքուած էին անթիւ երեխաներ 10 տարեկանից սկսած մինչև 16 տարեկան հասակը և թնդացնում էին օդը իրանց առողջ և սուր ձայներով: Սրանք խումբ խումբ բաժանած

պարապած էին իրանց մանկական խաղերով, մէկ տեղ  
«արթուրմա» էին խաղում, միւս տեղ «հասկինկիլա»,  
«ծրէ», «խատիսորմ» կամ լսխաիով դնքսում էին մէկս  
մէկու: Մի անկիւնում աւելի հասակաւորները կռճ  
եկած թաքուն «ղոմար» էին խաղում և անդադար երե-  
սը շուռ էին տալիս փողոցի կողմը, որ պօլեցիականը  
չտեսնէ նրանց ու չարգելէ խաղալ:

— «Սալէկ, մալէկ, լալոյնա», ասում է երե-  
խան մի ոտի վրայ թռչտելով: Սրան դնքսում են,  
ծեծում են և նորից վազեցնում են «բինէն»:

— «Իագինասէ, դագինասէ» բղավում էր իրա  
սուր ձայնով մի փոքրիկ երեխայ մօտենալով մէկ տա-  
նը և ինքը իսկոյն վախեցած վազում էր: Թէ այնտեղ  
թախկացած ոքմին լինէր կվաղէր նորա ետեից, կամ  
այն տեղից միւս տեղ կանցկենար և նորից թախ կը  
կենար: Երեխան շրջելով այս տեղերում հարկադրուած  
էր նորից նորան որոնելու:

— Ա՛, վա՛, ինչ իս անում, ասաց զօմարբազ-  
ներից մինը վեր թռչելով տեղից:

— Վ ա՛. . . ի՞նչ եմ անում, լավեցաւ մի հա-  
մարձակ ձայն և ասելուն պէս իսկոյն վեր թռաւ  
տեղից և կանգնեցաւ նորա առաջ: Այս վերջինը  
Ծղալօրն էր:

— «Տօ՛, տանուլ իս տուի, տուլ, խնդրում էր  
առաջինը:

— «Ի՞նչ եմ տանուլ տուի, համարձակ ընդ-  
դիմանում էր նրան Ծղալօրը:

— «Տօ՛, փուղ տանուլ տուիր, երկու արասի:

— «Տօ՛, ու՛ր էլ է, լածիրակ, զնա՛ զանգառ  
արա՛ պօլեցումը, ասաց և ուզեց շուռ գալ: Փող տա-  
նողը բռնեց նորա փեշից և կանգնացրուց, Ծղալօրը  
սաստիկ ուժով խփեց նորա ձեռքին, որից նա բաց  
թողեց նորա փեշը:

— «Տօ՛, ինչ ես խփում, թէ փուղ չունէիր,  
ինչե՞ էիր խաղում:

— «Ա՛ջբդ էլի էի հանում:

— Է՛, է՛, է՛. . . Ծղալօր, փուղ չես ունեցի,  
ասացին միւս խաղացողները:

— «Ունիմ ու չեմ տալիս, ասաց կատողած  
Ծղալօրը:

— «Բէսաբ նամաղուլ իս անում, ասաց փող  
տանողը քաճալերուած ընկերակիցների խօսքերից:

— «Բէսաբ նամաղուլ էլ իս անում ու բու. . .  
այս անգամ մի ծանրակշիռ յիշող լսուեցաւ բերանից  
և վրայ ընկաւ կատողած նորա վերայ:

— «Դուն զո՛ւղ, աւազակ, ասում էր փող  
տանողը:

Այս ժամանակ բոլոր երեխայք թողին իրանց  
խաղերը և միաւորուեցան կռուողների հետ:

— «Հա՛, հայ. . . Ծղալօր, էն օրը փո՞նց էր,

էն օրը, Սապուն ուտողը վունց քշեց վերի թաղը-  
ցերուն, քաջալերում էր. Ծղալօբին մի սևաչեայ 12  
տարեկան երեխայ:

— Հա՛, հա՛. . . բացագանչեցին միւսները:

— Տօ՛, փուղ իս տանուլ տուի, լոսս մէմարթ-  
լէբի, լացախաւն ձայնով ասում էր փող տանողը:

— «Ծղալօբ, իժում Լօխօշը . . . միտդ է,  
վունց էր ծիկայ տալի ու իրա էրգէն կոներով վունց  
թռաւ մէջ տեղ ու ինչկլի Մախաթի ծէրը քշեց  
նրանց. չէր հանդարտում նոյն սևաչեայ երեխան  
ոգևորելով նորան դէպի կուխը: Եւ տեսնելով որ  
լոկ խօսքերով նա չէ կարողանում աղղել նորա վե-  
րայ, վեր քաշեց թևերը և առաջ գնաց ամբօխի  
միջում, «հա՛, հա՛, շէնի ճիրիմէ, դադգէս բիճի»  
ասելով: Այս ժամանակ Ծղալօբին մի ուշունց տուեց  
փող տանողը: Ծղալօբը քաջալերված և ոգևորված  
միւսներից մէկ երկու լաւ վեր տուեց նրան: Սարք-  
վեցաւ լաւ կուխ, ամէն տեղեց հաւաքուեցան մար-  
դիկ և նրանց աղաղակով աւելի ոգևորվեցան կոփոզ-  
ները: Յետոյ միւսները նոյնպէս մէջը մտան և նրանք  
էլ սկսան կուտել: Մէկ երկու ժամ համարեա՛ Կօ-  
լօլ թաղի մէյդանում անթիւ բազմութեան ներկա-  
յութեամբ կալում էին նոքա, մինչև որ պօլնցիից  
զննուորներ չեկան ու նրանց մտրակներով չհեռաց-  
րին այն տեղեց: Բազմութիւնը ցրուեցաւ: Ծղալօբի

համար ոչինչ էր, շատերը կոփոջներից արիւնոտած  
ու ջարդուած դուրս եկան կուտից. նա հեռացաւ  
Կօլօլ թաղեց, բաւականանալով այն տեսարանից:

Ծղալօբը յաղթող մնաց, ըստորում նա մեծ  
էր նոցանից: Տանուլ տուած մի քանի օբասիները  
մնացին նորա ջերումը: «Ամէն լաճիրակին վունց  
թողնեմ, վուր փուղ տանէ ինձմէն», ասում էր նա  
ինքն իրան վաղելով Սօլօլակի կողմը: Նոյն գիշերը  
Ծղալօբը մի միկիտանխամայում լուսացրեց քէֆ ա-  
նելով:

1627.

Առաւօտեան ժամը տասն էր: Քննիչի մօտ վաղ  
առաւօտից բերել էին մի գող. բայց քննիչը դեռ  
չէր եկել իրա քննասենեակը:

— Թաթուխ, քի մատաղ, թո՛ղ ինձ, քու հօրն  
ողորմի, աղաղակում էր տասնապետին կոները կապած  
գողը . . . ի՞նչ գուզես, ուղէ ինձմէն, տամ:

— Չէ, չէ, ես քեզ լաւ կու ճաննչամ. . .  
էն օրն էլ դուն չէի՞ր . . . . .  
ի՛նք . . . . .

Եվ շվաքուրց տասնապետը և իւր ձեռքը թափ  
տուեց:

— Ախր, էն օր, Աստուած վկայ, ղուրթ իմ  
ասում, Թաթուխ . . . էն օր Քիղվարթը գիտենայ  
ղօմարումը տանուլ տուի մէ գիշերվայ մէջ:

— Ինձ ի՞նչ վուր տանուլ ես տայի . . . ա-  
տում էր սառնասիրտ զինուորը , ուշ չդարձնելով  
նորա աղաչանքի ու պաղատանքի վերայ : Երկար ժա-  
մանակ գողի և տասնապետի մէջ շարունակուեցաւ  
այս տեսակ խօսակցութիւնը , մինը աղաչում էր բաց  
թողնելու , միւսը չէր համաձայնում : Ուղիղ ժամը  
տասն ու մէկին եկաւ քննիչը : Սենեակում մեծ շար-  
ժողութիւն ընկաւ : Այն օր քննիչը ապսպրած ու-  
նէր շատ մարդիկ , ոմանք վիաներ էին , ոմանք իսկ  
գողեր կամ աւաղակներ : Սրանց հերթով հարցու-  
փորձ արաւ և բաց թողեց նրանց :

— Եւ ո՞վ կայ այդ տեղ : հարցրեց նա իր գը-  
րագրին :

— Մէկ գուղին բերի , պատասխանեց նա :

— Հրամայի՛ր այս տեղ կանչեն , ասաց քննի-  
չը և նստեցաւ սեղանի առաջ : Զինուորը ներս բերեց  
կաները կապած գողին :

— Որտեղ ես դուն դրան բռնել , հարցրեց  
քննիչը :

— Երեկ Սօլօլակի թաղում , աղա , սրան վը-  
րայ հասայ տուն կտրելիս :

— Մէնակ դուն բռնեցիր , թէ էլ ռքմներ  
կային այն տեղ :

— Գիշեր էր , աղա , զարմացած պատասխա-  
նեց տասնապետը :

— Լաւ , ասաց քննիչը և դարձաւ դէպի գո-  
ղը : Գուն ո՞վ ես , ի՞նչ գործի և ի՞նչ հաւատի :

— Ես գրօջօ իմ , աղա , անունս Ծղալօբ է ու  
հայ իմ . . . .

— Գրօջօ . . . . Ծղալօբ . . . . որն է  
անունդ :

— Ընունս Ծղալօբ է , աղա :

— Իսա գրօջօն , գրօջօն ի՞նչ է . . .

— Գրօջօն գրօջօ է , ասաց Ծղալօբը :


— Գրօջօն ի՞նչ փեշակ է , հարցրեց տասնա-  
պետից :

— Գրօջօն գրօջօ է , աղա , թղա փեշակ չունէ ,  
գործի չէ , դրա գործը զձեռն տեղ է :

— Հա՛ . բաս դատարկ կրծիկ է , և դրեց «պա-  
րապմունքով դատարկաշրջիկ» : Որտեղ բռնեցիր դրան ,  
նորից հարցրեց զինուորից և ի՞նչպէս , մէնակ էր ,  
թէ հետը ռքմներ կային :

— Մէնակ էր , աղա՛ . . . . սխեց տասնա-  
պետը , սրան շատ ժամանակ է կուձանջնամ , շատ  
բաղբոյնիկ է . սրամէն իլաջ չունեմ . համաշա ձեռ-  
նեմէս սլվում էր . . . . հիմի խոմ չես սլվի , դար-  
ձաւ նա բարկացած դէպի Ծղալօբը :

— Հա՛ , տօ՛ , քեզ գողութենի վրայ բռնեց՛ց :  
Ծղալօբը լուռ էր , զլուխը քարշ զցած , նայում էր  
գետնին :



— Ինչի՞ չես պատասխանում, հարցրեց քրն-  
նիչը:

— Աշխարայ գուղ է, էլ ի՞նչ պետք է ասէ,  
աղա, ընդմիջեց զինուորը:

— Լաւ, յետոյ ես դրա գործը կը քննեմ, այժմ  
ժամանակ չունիմ, ասաց քննիչը ժամացոյցի վրայ  
նայելով և վերկացաւ տեղեց, դուն տար դրան հիմի  
պօլեցիա՛:

Երկու օրից յետոյ Ծղալօբին բերդը տարան:  
Նա այն տեղ պատահեցաւ իրա շատ ծանօթ ընկե-  
րակիցներին և բարեկամներին: Դառն արտասուելով  
նա պատմում էր մանրամասնաբար իրա ծանօթներին,  
թէ ինչ պատճառաւ երևեցաւ նա բերդի սև պա-  
տերի մէջ:

— «Ա երջին ժամանակը ջլիս քաղցած էի  
մնում սաղ օրերով, ասում էր նա, արտասուքը  
սրբելով: Սատանէն ինձ խաբից, աղբէր . . . թէ չէ,  
ի՞նչ իմ բանն է գողութիւնը . . . . .»

— Մի վախենալ, ի՞նչ ես կու՞՞ գալի, սիրտ  
էին տալիս նորան գողերը, էլ թափուր բան մեզ էլ է  
պատահի շատ: Դուն խոչաղ կա՛ց, ասա՛ թէ դեսեա-  
նիկը սուտ է քեզ վրայ մեղք դնում, ասա թէ նա  
քիզ հեղ ջեղր ունէ, միթիթարում էին նորան փոր-  
ձուած գողերը:

— Թաթուխը վկէք չունէ, ի՞նչ ես դարդ ա-

նում, ասում էր մի կինսո: Էնօրը չէ՞ր վուր ինձ վը-  
րայ էլ ուղում էին միզ դնի, սէղովատէլին էլ ասի  
թէ դուրթ է, գողութիւն եմ արի, ամա էստի վուր  
եկայ, Աստուած կինք տայ սրանց, սովըացրին, վունց  
ժաժ գամ նրանց հետ, հիմի մնամ բանս լաւ է գը-  
նում: Ծօ վկէք չունին քեզ համա էլ, բացագանչեց  
նա աւելի հաստատ կերպիւ, ի՞նչ ին շատ խօսում,  
մէ մարդ է բունի, մէ մարդու ասածին խօսմ չին ա-  
ւատոյ:

— Ինձ էլ մէնակ բռնեցին, տղերք, ասաց Ծը-  
ղալօբը վստահացած:

— Պրծա՛ւ դնա՛ց. . . էլ ի՞նչ խօսիլ գուղէ:

Այսպէս սիրտ առած, քաջալերած ընկերներից  
մի քանի օրից յետոյ Ծղալօբը նորից կանգնած էր  
քննչի առաջ:

— «Աստուած, երկինք, աղա, ես իմ օրումս  
մարդու մնաս չիմ տուի: Նա է, էն Թաթուխը, որ  
դիփ էդնէս ման է գալի, ինձ հետ ջեղր ունի, ար-  
դարանում էր Ծղալօբը: Արա ուրիշ ո՛վ տեսաւ,  
թէ ես եմ արի, լաց լինելով և երդուելով ասում էր  
Ծղալօբը: Եւ ճշմարիտ, քննիչը տեսնելով, որ ուղեղ  
ապացոյցներ չկան նորա յանցանքի մասին, հարկա-  
դրուեցաւ դործը դադարեցնելու և աղատելու Ծղա-  
լօբին բերդից:

Մի ամիս չանցաւ Ծղալօբը բռնուեցաւ և այս



էր նայում, ինձ հաւատ չէր ընծայում: բայց յետոյ երբ ես նրան յայտնեցի Քիֆլիսի բնակիչ լինելս, բացուեցաւ և աւելի մտերմացաւ ինձ հետ: Իւրաքանչիւր օր, որքան էլ որ մնացի ես այն քաղաքում, այցելում էի Փանդուրեանին և ամեն ժամանակ ես մեծ բաւականութեամբ դուրս էի գալիս հիւանդանոցից: Ինձ շատ հետաքրքրում էր այդ մարդը, որ չստացած ոչինչ ուսում ու գիտութիւն, մինչև անգամ գրագէտ չլինելով, շատ առողջ և խոհեմ մտքեր էր յայտնում ամենայն տեսակ երևոյթների մասին: Խօսակցութեան մէջ, երբ ես նրանից հարցնում էի նրան հիւանդանոցը բերելու մասին, նա միշտ ժպտելով և արհամարհանքով էր ինձ պատասխանում: Նա մանրամասնաբար պատմեց իրա դիտով անցկացած բոլոր հանգամանքները, բայց մի բան, որ ես նկատում էի պատմելու միջոցին, այդ նրա մի տեսակ օտարոտի շարժուածքներն էին, որոնք հետևում էին, երբ նա կրակի ու բոցի մասին էր խօսում: Այդ ժամանակ նրա սև աչքերը կրակ ու բոց էին արձակում և բոպէ բոպէ յափշտակուած էր երևում: Նա հիւանդ էր իրաւ և նրա հիւանդութիւնը «հրամուրթիւն» էր:

Նորա պատմութիւնը հետաքրքիր համարելով, գրի անցուցի և այժմ առաջարկում եմ ընթերցողաց ուշադրութեան:

\* \*

Կէս գիշեր էր, սարսափելի մութ և խաւար գիշեր: Անսովոր աղմուկ ու աղաղակներ փողոցում և զինուորականաց թմբուկի միատեսակ դղրդոցը ոտքի վերայ էին կանգնացրել Քիֆլիսի բոլոր բնակիչներին:

Այն ժամանակ ես վեց տարեկան երեխայ էի և կենում էինք Նորաչէնի թաղում: Ծնողներս լսելով փողոցի մէջ պատահած անսովոր դղրդոցը սուս ու փուս, որպէս թէ մեզ երեխանցս չզարթացնելու համար, վերկացան տեղերից: Բայց մենք երեխայքս՝ ես ու իմ կրտսեր քոյրս չէինք քնած: Երկուսս էլ մի լէհէրի տակ պարկած արդէն վաղուց լսած էինք այն դղրդոցը, սարսափը մեզն առած կուչ էինք գալիս միմեանց, շնչասպառ լինելով լէհէրի տակ: Մենք երեւակայում էինք և միմեանց այդ մասին քզիչում լէհէրի տակ, թէ գողերն են աշխատում մեր տունը մտնել ու մեզ սպանել և այդ երեւակայութեան մէջ սասուր քրտինք վրաս տուել էր, և թո՛քը ցամաքել բերանիս մէջ:

Այս դրութեան մէջ էինք երբ մեր ծնողների զարթնելը և նրանց տեղերից վերկենալու պատրաս-

տութիւնը մենք լսեցինք: Արագ դէն գցեցինք մեր գլխովը փաթաթած լէհէբի ծայրը և կայծակի արագութեամբ նստելով անկողնի մէջ, միաձայն բղաւեցինք, «վա՛յ մէ, գողեր են գալիս»:

Նստողներս մեզ հանգստացնում էին գողերի մասին, պատուիրում քնել և իրանք շտապով հագնելովում դուրս գնալու: Մեզ աւելի միամտեցնելու համար ճրագ վառեցին սենեակում և դուրս եկան:

Փողոցում գլրդոցը աւելի էր սաստկանում. դրդրդոցին աւելանում էր լացի ձայնը. ծնողներս չէին վերադառնում սենեակը: Երկիւղն ու սարսափը աւելի տիրեցին մեզ երկուսիս և այլ ևս անկարող համարելով մնալ մէնակ սենեակում, ես առաջինը վեր թռայ տեղեցի և շտապով սկսայ հագնուիլ: Քոյրս ինձ հետեց: Մի րոպէյում մենք արդէն պատրաստ էինք դուրս գնալու, երբ մայրս տուն մտաւ: Երկիւղ ու սարսափ երևում էին դրոշմած և նորա երեսի վերայ: Նա մեզ կրկին հանգստացրեց և տարաւ մեզ դուրս ասելով, թէ գնանք «թամաշա» տեսնելը: Մենք բարձրացանք մեր տան հարթ տանիքի վերայ: Բարձրանալու միջոցին մի տեսակ խանձուածի հոտ ես զգացի. իսկ երբ բարձրացանք տանիքի վերայ իմ առաջ բացուեցաւ մի տեսակ անսովոր ինձ համար տեսարան, որ մի և նոյն ժամանակ զարհուրելի էր և հետաքրքիր:

Մի փոքր հեռաւորութեամբ մեր բնակարանից ահագին կրակի բոց շրջապատած մուսլ ծուխով բարձրանում էր երկինքը: Այլում էր մի մեծ շէնութիւն՝ քարվանսարայ, որն ինձ բաւականի յայտնի էր և ծանօթ, որովհետև շատ անգամ այնտեղ ուղարկուած եմ հօրիցս բարեկամ վաճառականի մօտ:

Տանիքի վերայ հայրս չէր երևում. բացի մեր ընտանիքից այնտեղ գտնուում էին շատ ուրիշներ մեր հարևաններից, որոնք եկել էին նոյնպէս «թամաշա» տեսնելու:

Բոցը աւելի ու աւելի սաստկանում էր. նա տարածվում էր ամբողջ շինութեան վերայ և սպառնում Սիօնի մայր եկեղեցուն: Թիֆլիսի բոլոր եկեղեցիների զանգահարութիւնը, կրակի ճայթումն և բազմութեան դրդոցը միանալով մի զարհուրելի աղմուկի մէջ, անում էին տեսարանը աւելի զարհուրելի ու անբնական:

Մարդուս մարմնու մէջ ակամայ սարսուռ էր ընկնում: Բայց ինձ զբաղեցնում էր այդ տեսարանը. ես երբէք այդպիսի մի բան տեսած չէի և հազիւ թէ Թիֆլիսի մէջ մի ոք ականատես եղած լինէր այն ժամանակ այդպիսի տեսարանի: Ինձ զբաղեցնում էր բոցն ու կրակը և սրանց յափշտակուած նայում էի, այս ժամանակ իմ ուշադրութիւնը գրաւեց և այն թէ ինչպէս մարդիկ վեր ու վայր լինելով շինու-

Թեան մէջ, կրակի բոցը մտնում էին ու խլում կրակի կլանող բերանից ամենայն տեսակ ինչք ու ապրանք:

Ահա մի մարդ, որ մի քանի անգամ դուրս էր եկել յաղթանակով կրակից և ամէն ժամանակ ստանում բազմութիւնից ծափահարութիւն և քաջութութիւնք, նորից է մտնում ամէն կողմից պատած բոցով սենեակը: Ահա՛ երևում է, որ նա կուռում է կրակի հետ, խլելով նորա բերանից մի արկղ. ահա՛ նա մտնելով է պատուհանին, որ այն արկղն ևս պահասայ լացող ու կոծող տիրոջը, որ այդ միջոցին փողոցում կանգնած տարածել էր իւր բազուկները իրա վերջին ինչքը փրկողի կողմ. բայց . . . . . այս անգամ յաղթութիւնը կրակի կողմիցն էր, որովհետև դիմացի պատերը անզօր լինելով, փլվում են և իրանց փլատակների տակ թողնում թէ արկղը և թէ իրան ինչքը ազատողին:

Մի սարսափելի ձայն, որ դուրս եկաւ հաղարաւոր մարդկանց բերանից, պատասխան էր կրակի յաղթութեանը: Մարդիկ շուռ տուեցին իրանց երեսը. կանայքը լաց եղան. մայրս ուշաթափ ընկաւ: Վերջը իմացայ, որ անձնագոհութեամբ իրան կրակի աւար դարձնողը իմ հայրս էր, որ աշխատում էր բարեկամ վաճառականի ինչքը ազատել կրակից:

Բայց ես շարունակում էի զբաղուել այդ տեսարանով. չնկատեցի էլ թէ ինչպէս ուշքի բերին իմ մօրս:

Միայն ջուր բղաւելը և իմ քրոջ լացը ականջիս հասան. բայց ջուր բղաւելունք և լացին մի քառորդ ժամուայ մէջ այնպէս ընտելացած էի, որ դժբա սովորական ձայներ լինելով ինձ համար, անուշադրութեամբ անցուցի նրանց ու շարունակեցի զմայլել տեսարանով:

Քանի առաջ էր գնում կրակը, այնքան նորա բոցի գոյնը փոխվում էր. կը տեսնէիր թէ ինչպէս յանկարծ մի սարսափելի ճայթումով բարձրանում էր նարնջագոյն բոց, վիժելով իրա հետ շինութիւնից զանազան տեսակ շէշեր և ապակեայ ամաններ, կամ մի առանձին շվոցով բարձրանում էր մոյգ կարմրագոյն բոց և տարածում ամէն ուրեք մի այնպիսի ծուխ, որ առ ժամանակ թագցնում էր մեր աչքերից բոցեղէն շինութիւնը կամ թուխ ծուխը վեր բարձրանալով, բոլորովին զուրկ էր լինում բոցից կամ հազիւ նշմարելի և տարածում օդի մէջ խանձուածի հոտ:

Արակը տուում էր մի քանի օր: Մենք երեխայքս դեռ էին շատ ժամանակ հանգցնելուց յետոյ շրջում էինք այրած շինութեան շուրջը և հանում փլատակների միջից զանազան իրեղէններ, կամ հաւաքում պատերից կպած սառած շաքարի հիւթը, որ մեծ ախորժակով մենք ուտում էինք:

\* \* \*

իմ հօր մահից յետոյ մեր գերդաստանը մնաց շատ  
 խղճութեան մէջ: Հայրս լինելով հասարակ կոշկա-  
 կար (խարազ) իրա աշխատութեամբ միայն կարողա-  
 նում էր մեզ համար օրական ապրուստ ձարել, իսկ  
 մեր ապագայի ապահովութեան մասին մտածելը նորա  
 կողմից մեծ յանգիւնութիւն կը լինէր, որովհետեւ նա  
 ունէր մի այնպիսի անյաջող արհեստ, որ տարէ ցտարի  
 վայր էր ընկնում: Աղբըւմ բարեկամ վաճառականը,  
 որի համար հայրս իրա գրուխը մահու գրեց, գալիս  
 էր մօրս այցելութիւն, նորան մխիթարում, խոստա-  
 նում երեսանց բարօրութիւնը, բայց շուտով նա էլ  
 իրա անձնական գործերից ստիպուած հեռացաւ քա-  
 ղաքից և այլ ևս չերեւցաւ: Նորա ցաւակցութիւնը  
 և մեր խղճութեանը մասնակցութիւնը նորա մէջ  
 յայտնվեցաւ, որ դուրս բերեց համբարի գումարից  
 մի բաւական նպաստ, որով մենք մի քանի ժամանակ  
 լրացնում էինք մեր կենսական պիտոյքները: Յետոյ  
 ինքը՝ մեր մայրը կարով և զանազան տաժանելի աշ-  
 խատանքով սկսեց մեզ պահպանել, իրա բոլոր յոյսը  
 դնելով իմ վերայ, որ պէտք է մեծանայի և նրանց  
 նեցուկը լինէի:

Իրաւ, ես մեծանում էի և ինձ հետ էլ մեծանում  
 էր այն տալանորութիւնը, որ գործել էր իմ վերայ  
 քարվանսարայի հրդեհը: Քիչեր ու ցերեկ ես հան-  
 դստութիւն չունէի. աչքս էի խփում, թէ բաց աչ-

քով շրջումս ամենայն ժամանակ իմ առաջս ներկա  
 յանում էր բոցեղէն ախիւ, որ հետզհետեւ աճում  
 էր ու պատում ամբողջ երկիրը: Եւ ոչ թէ այս քանը  
 ինձ վախեցնում էր, ոչ այլ ընդ հակառակն մի հոգե-  
 կան բաւականութիւն և գնայլմուք պատճառում  
 ինձ: Եստանդամ անկողինը մտնելով, ես աչքերս  
 խփում էի և ինձ ներկայացնումս սցաւկան այն  
 ինձ ծանօթ թիֆլիսում, մեծ շինութիւն պատած  
 կրակով: Այս դէպքում ինձ ոչինչ էր զբաղեցնում,  
 բացի կրակի շվոցը ու ճայթումը: Երեւակայութեանս  
 առարկան էր իմ հօր անձնագործութիւնը, չէր որ և  
 իցէ ուրիշ հերոսութիւն, մինչև անգամ իմ երեւա-  
 կայութեանս մէջ ես յանձն էի առնում մի այնպի-  
 սի պաշտօն, որ ունէր իրաւունք արգելելու հանդց-  
 նել կրակը:

Երեւակայութեանս առարկան հետզհետեւ ստա-  
 նում էր մարմին և արիւն, որ հետզհետեւ անսկսեցի  
 նորան իրագործել: Առաջին անգամ, մեր տանը բու-  
 խար չուենալու պատճառով, ես թողնելի բոցով էի  
 զմայլվում, կամ մեր տան մանդալի ամուխի կրակով,  
 յետոյ ևս անհամբերութեամբ սպասում էի մեծ պա-  
 մերին, Նոր աւագ շորեքշարթի գիշերը զմայլուէի  
 խարդիլի տեսարանով, որ այդ գիշերը սովորութիւն  
 ունին թիֆլիսիցիք իրանց բակերում վառել և նորա  
 վերայով թռչկոտել: Ես այդ գիշերը երբէք չէի

Թուշկոտում խարոյկի վերայով, ինձ այդ չէր զբաղեցնում, այլ նրանից հեռու կազնած, աչքերս տասը շինած, նայում էի թէ ինչպէս յարոր կամ խոր իրադեղնագոյն բոցը բարձր երկինքն էր խփում և արձակում շատ նուրբ ձայներ: Այդ նուրբ ձայները ինձ կատրեցնում էին և ես շտապով բերում էի մեր անկից, կամ գողանում էի ուրիշ տեղից Թոնրի համար հաւաքած ցախը և դցում խարոյկի մէջ, ապա թէ ես հանգստանում էի լսելով ցախի բոցի ձայնը: Զբաւականանայով մեր տան տեսարանով, ես գնում էի հարեանների տունը, այնտեղից մօտակայ փողոցները և յետոյ շրջում էի համարեա ամբողջ քաղաքը և ում տան բակումը բոց տեսնում, այնտեղ մտնում էի և հրձուանքով զմայլվում այդ տեսարանով:

Այդ միջոցին տան կրակ ընկնիլը դեռ այնքան սովորական չէր Թիֆլիսում, ուստի մնում էր ինձ բաւականանալ այդ գիշերուայ տեսարանով: Բայց շուտով աւագ չորեքշաբթի գիշերները շուտ շուտ կըրկնուեցան մեր տան բակումը: Իմ այս տեսակ արարքի վերայ մայրս կամ ուշադրութիւն չէր դարձնում կամ բաւականանում էր միշտ անէծք, ծեծ և ամենայն տեսակ հայհոյանք ինձ վերայ թափելով: Մէկ անգամ այդ իմ զուարճութեան միջոցին փոքր մնաց, որ մեր դրացու տան տախտակամածը չայրեցի: Բայց

շուտով կրակը հանգրին, ինձ մեծ հոգեկան նեղութիւն պատճառելով: Բայց ոչ ծեծն և ոչ հայհոյանքն ինձ վերայ ոչինչ ազդեցութիւն չէին ունենում. այլ այդ աւելի զբաղեցնում էր ինձ, որովհետև կրակը իմ հոգեկան սրամազրութեան հետեանքը լինելով ոչինչ բանի առաջ ինձ չէր կանգնեցնում իմ նպատակին հասնելու համար:

Սրակը դառնում էր իմ տարրը: Մոմն ու ձըրագը իրանց փոքրիկ բոցով ինձ աւելի նեղացնում էին քան զմայլեցնում: Ինձ հարկաւոր էին մեծ բոցեր և միայն այն ժամանակ ես ինձ բաւականացած էի համարում:

Այսպէս էի ես տրամագրուած, երբ ինձ տասը տարեկան երեսային տուէին մի բազազի մօտ աշակերտ: Սկզբում ես ծառայում էի խանութում ինչպէս բոլոր խանութների աշակերանները: Խանութ աւելել տիրոջ տանից կերակուր բերել, սպրանքը շտկել ու մուշտարու մօտ տանել, ահա սորա էին այն գործերը, որ յանձնում էին ինձ խանութում կատարել: Ես այս բոլորը կատարում էի, բայց չար հոգին կրակը այստեղ էլ ինձ չէր հանգստացնում, ամենայն քայլափոխում հալածում և իմ տրամադրութեանս վերայ կանգնեցնել տալիս:

Մանգալի անաջ ընտանիքն անգամ  
 թղթի կտորներ, փայտեր, յարգ գցում կրակի մէջ  
 ու զմայլում էի նորանց տուած բոցով: Մեծ էր իմ  
 սրբախոթիւնը և զուարճութիւնը, երբ մի անգամ  
 գտնելով չթի կտոր, դցեցի այն կրակի մէջ, մի տե-  
 անակ հոտ, որ բարձրացաւ այդ ժամանակ այրած չը-  
 թից, իմ մարմնուս մէջ մի սաստիկ սառտու գցեց  
 և ամբողջ մարմինս դողաց: Այրած չթից բարձրա-  
 նում էր այն խանձուած հոտը, որ զգացի ես կանգ-  
 նած մեր տան տանիքի վերայ քարվանսարայի այ-  
 ղուելու միջոցին: Այն օրից համարեաւ ամենայն օր  
 այդ բաւականութիւնը ստանում էի, այստեղ այնտեղ  
 գտնելով չթի կտորները և նրանց կրակի մէջ դցե-  
 լով: Շուտով փոքր կտորներից անցայ մեծ կտորնե-  
 րին և մի անգամ մի թոփ չիթ էլ էի ուզում այ-  
 րել, բայց խանութի գործակատարը բռնեց ինձ և  
 բաւական ծեծեց:

Խանութից տունը տեղափոխեցի չիթ այրելու  
 տրամադրութիւնը: Այլ քրոջս շոր էի խնայում և ոչ  
 մօրս դերիս. իսկ իմ արխաղուխը շատ տեղերում խան-  
 ձուած էր ու այրուելուց դուրս թափած:

Այս տրամադրութիւնը հետոցհետէ ինձ տի-  
 րում էր. կտորտանք այրելը այլ ևս բաւականացու-  
 ցիչ բան չէր իմ հոգեկան դրութեան համար. հո-  
 գիս կարօտ էր աւելի մեծ զուարճութեան, քան որ

ես այս միջոցին կարող էի ինձ տալ: Այժմս էլ ինձ  
 անհասկանալի է թւում թէ այդպիսի մի զուարճու-  
 թիւն, ինչպէս որ է անարկաներ կրակ տալը, ինչպէս  
 կարող է մարդուն մինչև յափշտակութիւն հասցնել:  
 Այս յափշտակութիւնը իմ ամբողջ անձը տիրել էր  
 և բոլորովին դցել իմ պարտականութիւնիցս խանու-  
 թի մէջ: Խանութպանը ձանձրացած իմ արարքնե-  
 րից վերջագէս մի օր յայտնեց ինձ թողնել նրա  
 խանութը: Սայրս ապշած մնաց. տասնուչորս տարե-  
 կան օրդու պարսպ մանգալը նրան զարհուրեցնում  
 էր, բայց ես հանգիստ էի, կարծես թէ այդ եղելու-  
 թիւնը ուրիշէ հետ էր պատահել և ոչ թէ ինձ հետ:

Այդ միջոցին արդէն քաղաքի մէջ հրդեհ-  
 ները յաճախ էին պատահում և այս պատճառաւ  
 ոչ մօրս խնդիրքը և ոչ աղաչանքն, ոչ լացն և ոչ  
 սպառնալիքը ինձ չէին կարող համոզել նոր մէկանց  
 մտնել օր և է խանութ գործակատարի պաշտօնով:

Այդ միջոցին, օրուայ ինչ ժամանակն էլ լինէր,  
 կարծես բնազգմամբ էի խմանում կրակի մասին և  
 նետի արագութեամբ այնտեղ վազում և առաջինն  
 ներկայանում բոցեղէն շինութեան առաջ: Այն ինչ  
 մարդիկ վրդոված դէս ու դէն էին վազում, ամենայն  
 տեսակ միջոցներ հնարում կրակ հանդցնելու համար  
 և օգնութիւն հասցնում, — ես հանգիստ մէկ տե-  
 ղում կանգնած զմայլում էի հրդեհի տեսարանով:



փոքր օգնութեամբ մարդու կողմից կարող է իր ան-  
 նապարհը հարթել շինութեան մէջ : այստեղ դրանք  
 շեմքը լեղել, այնտեղ հասնել տան կարասիքին, կամ  
 խանութի ապրանքին և ահա բոցեղէն արևնը պա-  
 տում է ամբողջ շինութիւնը և հրդեհը պատրաստ է :  
 Այդպէս էլ եղաւ մեր թոնրատան հետ մի-  
 բունը տաշեղներ շողտխած նախի մէջ և մի լուցքի  
 հերիք էին որ չոր տախտակամանի մի անկիւնը ի-  
 րանց ճարակ առնէին և փոքր ժամանակվայ մէջ պա-  
 տել էին ամբողջ շինութիւնը կրակի բոցով : Մի...  
 ինչ գեղեցիկ տեսարան է վառվելու սկիզբը .  
 « փստ », « փստ » փստփստացնելով հրեղէն լեզուներն  
 ամեն կողմից լեզում են տախտակը և յետոյ բոցեղէն  
 օձի ձև ստանալով նրա մէջ սկսում է սողալ, առաջ  
 նրան սևացնում և յետոյ կարմիր գոյն ներկում : Մի-  
 րոպէյում արդէն ամբողջ անկիւնը բոցեղէն սիւն  
 դառնում և այս միջոցին իմաց տալիս իրա ներկայու-  
 թեան մասին բնակիչներին, որոնք յետոյ այնպէս  
 անզուժ են գտնվում, որ այդ բոցեղէն հրեշը մեր  
 կացնում են, անխնայ թափելով նորա վերայ նորան  
 թշնամի տարրը ջուրը : Եւ ի՞նչ է մնում նորանից  
 . . . . . այն բոցեղէն հրեշից, դուրս արխնով է  
 լքցվում երբ այդ յիշում են, սեւացած, մրտաձ հետ-  
 քեր, որ շուտով ջրի հետքեր են, քան թէ կրակի :  
 \* \* \*

Պետրոս քաղաքի մի մեծ շինութեան բոցը էր  
 հանգել և նորա փլատակների վերայ այնտեղ վա-  
 սուած մարդիկ չէին ցամաքացրել իրանց աղէ արտա-  
 սուքը, երբ լուր տարածուեցաւ, որ շինութեան կը-  
 րակ տուողն էր Գորեցի Ասլանը :  
 Ես այդ միջոցին արդէն հասակը առած իմ  
 քրոջ մարդու իմ փեսայի հետ նոյն շինութեան  
 մէջ խանութ ունէինք, վաճառելով այնտեղ զանազան  
 խմիչքներ և ուտելիքներ :  
 Հասակի հետ կարծես թէ իմ բոցեղէն տրա-  
 մադութիւնը հետզհետէ հանդուժ էր իմ մէջ, բայց  
 չէ, չէ, կարծես մի ներքին յուզմունք պատում էր  
 ինձ նորից կրակ տեսնելով, և հրդեհ պատահած  
 միջոցին յետ չէի ընկնում իմ վաղեմի զուարճու-  
 թիւնից :  
 Փեսաս շատ հնարագէտ և ճարտիկ մարդ էր,  
 ինչպէս ասած է, քարիցն անգամ փող կհանէր : Մայրս  
 նորան ինձ միշտ օրինակ էր կացուցանում իմ պա-  
 րազ ման գալու պատճառաւ, վերջնպէս ստիպեց  
 ինձ սկզբում մտնել նորա խանութը գործակատարի  
 պաշտօնով և շուտով էլ փեսաս ինձ իրա ընկեր շե-  
 նեց :  
 Մենք լաւ էինք առուտուր անում, խմիչքների  
 և ուտելիքների առուտուրը ամենաշահաւէտ գործ  
 է թիֆլիսում, ուր մարդիկ աւելի իրանց փորի և

զուարճութեան համար են մտածում ու հոգս անում։  
 Մեր մայր զուարթ ու շինչ էր փեսանս միշտ  
 գանգատուոր էր լինում բանկերից և ուրիշ փողա-  
 աէր անձերից նորան փող չտալու պատճառաւ։ Նա  
 շատ էր ուզում առուտուրը կայնացնել, բաւելի մեծ յա-  
 մեծ գործեր բռնել, բայց չէր յաջողում փողը պա-  
 կասեթիւնից սոսմ փաստի նոյնոյցան ջոզց

Մեր խանութը հէնց այն շինութեան մէջ էր որն  
 այժմ հրդեհից ոչնչացած է։ Դորեցի Ասլանի  
 խանութը մեր խանութին կպած էր։

Մարդիկ առաջին անգամ բոցը նորայ խանութն  
 թից գուրս եկած տեսան, այն պատճառաւ բոլորեւ  
 քեանք նորայ վերայ մաար գրին թէ խանութն այն  
 բոցը նա էր։

Ասլանին ես լաւ ճանաչում էի. նա շատ բարի  
 և ազնիւ տղայ էր. նա երբեք այդպիսի բան չէր ա-  
 նի և զարմանում եմ, թէ ինչպէս մարդիկ անմեղ  
 մարդուն մեղաւոր են անում։ Ամենից շատ խնայող և  
 բղաւողը իմ փեսան էր և նա էլ մի աների հետ հաս-  
 տատում էր թէ հրդեհը Ասլանի գործն է։ Ինձ շատ  
 էր տանջուս Ասլանի մեղադրութիւնը։ Ամենայն ժա-  
 մանակ երբ ես գուրս էի գալիս նորան պաշտպան  
 այդ բանի մէջ, ինձ բոլոր խանութատէրերը լռեց-  
 նում էին և երկար ու բարակ սկսում ինձ հաստա-  
 տել, թէ ինչպէս և ինչ տեղից բոց էին տեսել առա-

ջին անգամ և թէ Ասլանը իրա մանր առուտուրը  
 միայն հրդեհով կանեցել է մեծացնել, ստանալով  
 «սորախի» փողը և Չարմանալի բան, կարծես թէ ի-  
 րանք ևս ուրմա չէին որ այրուեցաւ նրանց ապրանքը,  
 որովհետեւ շատերը նոցանից բաւականի մեծ գումա-  
 րով ազահոված ունէին իրանց ապրանքը, բայց չէ,  
 նրանց հարկաւոր էր զոհ իրանց մաքուր գուրս բե-  
 րելու։

Ասլանին բռնեցին և նստեցրին բերդը։ Ինձ  
 մարդ ... պէնք էր տեսնել թէ ինչպէս նորան ե-  
 րեսի դոյնը թռաւ և ամբողջ մարմնով դողալ սկսեց,  
 երբ նորան յայտնեցին այդ վճիռը։ Անասնիքի վե-  
 ճակը և մարդուս բարի անուան կորուստը ո՞ւմ չեն  
 դողացնի այդ տեսակ վճիռը լսելով։ Բայց արդա-  
 րութիւնը անպատիւ է, նորան հարկաւոր էր զոհ։

Ասլանը զոհվում էր։

Ես ուշի ուշով հետևում էի Ասլանի գործի  
 ընթացքին. քննչի ստացած տեղեկութիւնքը հրդեհի  
 մասին և զանազան անձանց տուած վկայութիւնք ես  
 համարեա անգիր գիտէի։ Գործի բոլոր հանգամանքը  
 մի կէտին էին բերում, թէ բոցը երեւեցաւ նորա  
 խանութից և թէ նա Ասլանը հրդեհի գիշերը բաղ-  
 նիս էր դնացել իրա գլուխը հեռացնելու, ուրեմն  
 նա է մեղաւոր, նա կրակ տուեց իրա խանութը։ Ինեզ  
 մարդը ինքն իրան մաշվում էր, երբ այդ հանդա-

մանքը միակնոյ վերայ բարդելով նորան աններև մեծ  
 դաւոր էին դուրս բերում այն բանում որի մէջ հոգւ  
 ւով մարմնով նա արդար էր: Ո՛րք չէ պատահել իրա  
 կեանքի մէջ լինելու այսպիսի հանգամանաց մէջ, որ  
 կամայ ակամայ լեզուդ կապվում է, որ մէկ անգամ  
 առաջ չես բերում, անիրաւացի է լինում ուրիշի  
 աչքում: Իսկ նրանց բերած վկայութիւններն բանա  
 ժխտելի և իրաւացի: Մի ներքին յուզմունք, մի տեւ  
 սակ կեիւ բացում է սրտիդ մէջ և դու պատրաստ  
 փում ես յանձն առնել այն յանցանքն, որ դու յերձ  
 բէք մտածած էլ չես կանտարելու:

Աստուծոյ նոյն դրութեան մէջ էր:

— Ախր . . . Սանդրո ջան, զիմեց նա ինձ  
 մէկ անգամ, երբ ես նորան բերդը այցելութիւն գը  
 նացի — սաղ սաղ մարդուն գերեզման են դնում. . . . .  
 ամէն բան էնէնց ին բերի, հէնց զիտեմաս ես եմ  
 կրակ տուի. . . . . ասիւր էսէնց բան կուլի . . . . .

— Կրակ դուն չես տուել ասի ես հաստատա  
 պէս:

— Ատուած, երկինք, գետին. ես չեմ տուի,  
 գոչեց կալանաւորը և սկսեց երեխայի պէս լաց լինել:

Մարդը անգոր է արդարութեան առաջ. նա  
 իւր բոլոր գործերով ենթարկվելու է նորա վճռին.  
 լաց, աղաչանք, պաղատանք մարդու թուրութեան

արդասիքն են և ոչնչով չեն փոխի արդարութեան  
 դատավճիռը: Այս պատճառաւ Ասլանի լացը և երդումները  
 փոխանակ իմ դութը շարժելու, ինձ վրայ անախորժ  
 տպաւորութիւն գործեցին: Եթէ ճակատագիրը այն  
 պէս է որոշել որ մարդը պէտք է մի յանցանքի համար  
 զոհ գնայ, արդար ես թէ մեղաւոր նորանում, հար  
 կաւոր է բաց ճակատով դատավճիռի դիմաւորեա:  
 Թուրութիւնը միայն սաստկացնում է յանցանքի զո  
 ժիւնը և անում է մարդուց մի խղճալի էակ, մի  
 անբան կենդանի, որ իւր արածը սկզբից կշռած չէ  
 և հաշուած:

\* \* \*

Ասլանի գործը չորս ամսից յետոյ քննեցին  
 դատարանում: Մեծ բազմութիւն էր հաւաքուել  
 լսելու, թէ ինչպէս մէկ մարդու պէտք է զրկեն հա  
 սարակական գործունէութիւնից:

Դատաւորները հաստատամիտ էին. նրանք դուրս  
 բերին մեղադրական դատավճիռ. Ասլանին իրա խա  
 նութը կրակ տալու պատճառաւ արստրում էին Սի  
 բեր:

Ասլանը դեղնեցաւ. մտք էր ուշաթափուելու:

Այն ժամանակ մի մարդ բազմութեան միջեց  
 դուրս եկաւ և կանգնեցաւ դատաւորների առաջ:

երևում էր, որ մի ներքին յուզմունք պատել էր նորա  
ամբողջ մարմինը. նա սկսեց խօսել և յայտնեց բա-  
ցարձակապէս, որ ՏրդէՏ անաջացնողը շինութեան  
մէջ նա ինքն է. . . . .  
Գատաւորները և բնագմութիւնը նապաճ մը-  
նացին. բողոքեցունց երեսի վերայ երևեցաւ մի տե-  
սակ ժպիտ, որով ուզում էին ցոյց տալ այն մար-  
դուն թէ նա խելացնոր է. բայց նա հաստատապէս  
կրկնում էր իրանը և բերում զանազան փաստեր:  
Նա ասում էր, որ կրակը սկսուելու միջոցին ինքը  
այնտեղ էր գտնուած: Առաջ սկսուեցաւ այրուիլ Աս-  
լանի զրացու խմիչքների և ուտելիքների խանութի  
անկիւնը, որտեղից շուտով անցաւ տախտակամանի  
միջով Ասլանի դուքանը և այստեղ կրակը աւելի զօ-  
րացաւ:

Հաստատ համոզեցուցիչ խօսքերը ազդեցին  
գատաւորների վերայ և նորա հրամայեցին նորան  
կալանաւորել: Այն մարդը ես եմ . . . . .

Ես իրաւ կրակ տուի մեր խանութը, որովհետեւ  
մտից և խմիչքներից առաջ եկած ծովի հոտը, որ  
եւ մէկ օր զգացի մեր խանութում մի փոքրիկ հրը-  
դեհից յետոյ, ինձ շատ գրաւեց. ինձ յիշեցրեց  
քարվանսարայի ՏրդէՏը. ուստի աւելի մեծ բաւա-  
կանութիւն ստանալու համար ես մեր խանութը այ-  
րեցի: Մէկ օր աննկատելի փեսայիս համար ժողովեցի

խանութի անկիւնում մեր ապրանքներից մի քանիսը,  
նրանց դիւրաւ այրելու համար նախ թով շաղախեցի  
և դուրս գնալու միջոցիս կրակ տուի: Մինչև որ  
կրակը իրանը կանէր՝ մերոնք գնացին տուն. իսկ ես  
մնացի այնտեղ և լսում էի ինչպէս շփոցով սկսում էր  
այրուել:

Ինձ կալանաւորեցին, Ասլանին անմեղ համարե-  
ցին: Բայց փոխանակ ինձ Սիբիր քշելու, ահա՛ այս-  
տեղ՝ հիւանդանոցը բերին խելագար ինձ համարե-  
լով:

Բայց ես խելագար չեմ . . . . . ես հրէշ  
եմ . . . . .



Ա. ՔԱՆԱԿՅԱՆ

« Ազգային գրադարան



NL0345991

